## 33. ԾՈՒՌ ԱԽՊԵՐ

Էրկու ախպեր կէլնեն, մեկ՝ խեղացի. մեկ՝ ծուռ: Էդա խեղացուն կնիյմ կէլնի: Խեղըցին ամեն օր կէրթը վիցկի:

Ծատ կնեղանա: Ավուր մեկին ախպոր կասի. - Օրմ էլ տյու կնա վիցկի ատրա, ախպե՛ր, ես մնամ տուն իմ խալվներ լվամ:

- Լա՛վ, - կասի ծուռ ախպեր, - էս օրն էլ ես կէրթամ: Ես քեզնից ետ չեմ մնա:

Եզներ թոնի տյուս փայխից, լյուծ, վիցկին կտնի վեր թիվին, եզներ կուտըն առաճ, կքշի չուր գյետան պերան, կիրիշկա էտա գյետան մեջ, ճողմ մեջ ճրին՝ ճյուր կզըրկի իրար կտիպնի:

- Քավո՛ր, - կասի ճողին, - իմ եզներ ամանաթ քյե, ես գյէո կէրթըմ, իմ եզներաց որ վնասմ էլավ. քյեզնից կուզեմ:

Լյուծ վիցկին կառնի կուգյը: Ախպեր կէլնի տյուս, կասի. - Եզներ ի՞նչխ արիր:

- Եզներ տվեր եմ քյավուրոչ ամանաթ:

Խեղացի ախպեր կնգյըն կասի. - Կնիկ, ասպած քյո տուն ավիրի, էսա ծուռ մեր եզներ իտուր տյուս: Էլի էրթընքյ. մեր եզներաց իտև փուանքյ:

Կլնեն կէրթըն էնչափ կան կուգըն, եզներ չեն կանա կնդնե:

Տառնան ետ իրիյ, կնիկ, կթողնեն կուզյըն տուն:

Ծուռն կէլնի պալթեն կառնի, խեղըցին կինի իտև: Կխասնեն գյետան պերան, ծուռն ուր ճող կտիսնա. կասի. - Քյավո՛ր, յուրե՞ իմ եզներ:

Ճողն ծեն չի խանե:

Իրեքյ անգամ կխարցուցի, ճողն ծեն չի խանե: Ծուռ կմտնի մեջ գյետին, պալթեն կզըրկի: Ջըրկելուն պես, էրկու գյուգյում ոսկին կէլնի տյուս: Կգյրկի գյուգյումներ. կառնի կուգյը տյուս:

Կասի. - Ախպե՛ր, դե՛ առ էրթընքյ:

- Ես չեմ կանա առնե, - կասի խեղըցին:

Էրկու գյուգյում ոսկին կտնի ջվըլ, կուտա ծուռ ախպոր քյամակ, տքտքյըլեն կպիրի տուն:

Ծուռն ախպոր կնգյըն կասի. - Խաց պե ես ուտեմ, ես անոթի մեռա:

Խաց կտնեն ըռճև:

Ծուռն գյէո կուտի:

Խեղըցին ուր կնգյըն կկանչի, կասի. - Արե՛, էսա ոսկին տանենքյ պախենքյ, քյանի էն չտիսե:

Կառնեն ոսկին կտանեն պախեն:

Ծւսպաթմ միճոց կըլա̈շի:

Ծուռն կասի խելա̈ցուն. - Ես կպաժվեմ:

Խելա̈ցին կասի. - Մե ի՞նչ կա, որ տյու կպաժվես: Էրկու եզ ունենքյ. էն էլ տարար կուրիսիցիր:

Ծուռն կասի խելա̈ցուն. - Քյավուրոչ տուն որ ավիրիցի էրկու գյուգյում ոսկի պիրեցի, ու՞ր ի էն ոսկիքյ:

- Ախպեր, տյու ծռա՞ր, ի՞նչ քյավուրոչ տուն, ի՞նչ գյուգյում ոսկի:

- Է՛. տյու տարար պախիցիր, մկա կուրանաս: Ես կէլնեմ կէրթամ գյանգյատ:

Ծուռն կլնի կէրթա̈ մո կազին:

Կպողոքի, թե. - Ես էրկու գյուգյում ոսկի եմ կնդե. իմ ախպեր ծեռնես առե. չի տա:

Կազին խելացի մարթ կէլնի, կկանչի խելա̈ցի ախպերն էլ, կասի՝ իսոնց մեչ պամ կա:

Կազին ծռուն կխարցուցի. - Էն գյուգյում ոսկիքյ քյանի՞մ կէն:

Ծուռ կասի. - Մեկ ըննեմ կեր (ձեռներով չափը կցուցնե), մեյն էլ ճա̈ր ըսկնեմ կեր (նորեն կչափե):

Կազին ծռուն կխանի տյուս:

Խելացուն կպիրի ներս, կխարցուցի. - Էսա քյո ախպեր էրկու գյուգյում ոսկի ի կնդե. ի՞նչխ ես արե:

Կասի. - Սութ ի, կազի էֆենդի. էն ծուռ ի: Զի ջուխտմ եզ կար. տարավ կուրիսեց. որ չես ավատա. էրկու խա տրկից կանչի. ինոնց խարցու:

Կազին տրկցներ կանչեց. խարցուց, էսա մարթուն քյանի խատ եզ կեր:

Կասին. - Խա՛. էրկու խատ եզ կեր:

- Ի՞նչխ էլավ:

- Ինոր ծուռ ախպեր տարավ կուրիսեց: Խեղճ մնացե մեչ ուր տան ծեռ ծոց. վա̈ր ցանքյ չկանա անե:

Կազին կխարցուցի, թե. - Էտա ծուռն էրկու գյուգյում ոսկի ի կնդե, տյուքյ խա̈բա̈ր չե՞քյ:

- Չէ՛, - կասեն, - մենքյ խա̈բա̈ր չենքյ:

- Սութ ի. անոթի նստե մեչ տան:

Կազին տրկցներաց կճամխի: Ամր կանի. էտա էրկու ախպոր կտանեն տնեն պռնատուն:

Մարթ ճամխեց վեր խելա̈ցու փենջա̈րին: Խելացի ախպեր ծեռքյեր տրե ծոց. կասի. - Վա՛յ, վա՛յ. ջուխտմ եզ ունե, էն էլ կուրիսավ, մկա էլ իկեր եմ նստեր եմ պռնատուն:

Կնացին վեր ծռու էրդիսին, ծուռն կասի. - Էն մեկ գյուգյում ըննեմ կեր, էն մեկն էլ ճար ըսկնեմ կեր: Էն թող մնա դա̈: Ես կիրիշկամ կազու գյլեոխ ըննեմ կեր, ինոր մոր զա̈տ ըսկնեմ ի, էնտեղից ի՞նչխ էլե տյուս:

Մարթերն էլա̈ն կնացին ուրենց տեսածներ կազուն ասին:

Կասեն. - Ջա՛նմ, էսա ծուռ ի:

Կազին կասի. - Էն ծուռ չի. իսոնց տակ շա պա̈ն կա: Մենքյ չենք կանա խասկնա: Կնացեքյ խանեքյ տյուս էրկու ախպորն էլ. թող էրթա̈ն:

Էրկու ախպեր պռնատնից !.լա̈ն, էկան տուն:

Խելա̈ցին ասաց. - Կնի՛կ, խաց պէ:

Ուրենց խաց կերան, պառկան քյնան: Առատուն էլան վեր: Խելացին ասաց ծուտն. - Էլի՛, էրթանքյ կարիքութեն. բելքյիմ քյասիմ փարա վաստկենքյ, պիրենքյ, տանք մեր պառտքյ:

Ծուտն կասի, խելա̈ցուն. - Էրթա̈նքյ, ես քյեզնե ետ չեմ մնա:

Խելա̈ցին և ծուտ էլան ինգյան ճամբուխ:

Ծատ-քիչ ասպած կիտի:

Մեկէլ օրն էլան վեր. խասան մեյ գյետան պերան, տեսան գյետի մեչեն տյուտ կուգյա̈:

Ծուտն ասաց խելա̈ցուն. - Տյու կիտե՞ս, էսս վո՞վի կուգյա̈ գյետի մեչեն: Էսա մեր խերն ի. ես պիտի մտնեմ ճրի մեչեն իմ խեր պիրեմ:

Մտավ մեչ ճրին, տյուտն պռնեց. քյաշեց ճրից խանեց իպե:

Ծուտն ասաց խելա̈ցուն. - Իմ խեր էսա տեղ չկանա ապրե, ես պիտի խանեմ էսա ծառի գյլեոխ:

Խելա̈ցին ասաց. - Էնտեղ ցուրտ ի, մեր խեր թաց ի, կմսի, մի խանե վեր:

Ծուտ կասի. - Մսի, չմսի, աճա ես գյեռ էլա ծառ:

Ծուտ շլկեց էն տյուտ խաւնեց ծառ: Խելացի ախպեր յավաշ-յավաշ ինքյն էլ էլա̈վ ծառ: Մեկ սա̈ճա̈թ վերճ քյառսուն խատ գյող էկան իճա̈ն էտա ծառի տակ:

Ուրենց ճա̈յբեքյ պացեցին. փոխնտներ, պա̈ղարճներ խանեցին տյուս, կուտեն:

Ծուտ ախպերն ասաց խելա̈ցուն. - Իմ ճրվածքն էկավ, ես պիտի ճրվածքյ անեմ:

Խելա̈ցին ասաց. - Աստծու սիրուն, տյու կշռես, աման իսոնքյ գյող են, կլնեն զա̈նեն, մե կսպանեն:

Ծուտն ասաց. - Ես կշռեմ, կսպանեն՝ քյե կսպանեն, զի պամ չեն կանա անե. որ ըսկոն ի. ես պիտի իմ խեր թողնեմ, անոթի եի, էրթա̈ ինոնց խետ խաց ուտի:

Տյուտ վիրանց իթող: Ծփշփալեն, էտա ճողեր կոտրտելեն տյուտ էկավ տակ:

Գյողեր էլա̈ն փախան:

Ծուտն ծառից իճավ տակ: Էտա փոխնտներ, պա̈ղա̈րջներ ճավաքեց: Խելա̈ցին էլ իճավ տակ. էն էլ սիլա̈խներ ժողվեց:

Ծուտ ախպեր նստեր ի, խաց կուտի: Խելա̈ցին ասաց. - Մե պրտյուճ էլ տու զի:

Ծուտն ասաց. - Ընչի՞ կուտամ: Մեյ խատ էտա սիլա̈խից տու խշթեմ իմ մեչք, որ քյե եէլ տամ:

Խելա̈ցի ախպեր սիլա̈խներ իտուր ինոր, մեյ պրտյուճ խաց առեց ինորից:

Ծուտն ասաց խելա̈ցուն. - Տյու էսա սիլա̈խներ ի՞նչ պիտի անես: Որտեղ որ կէրթա̈նքյ, խաց ինքյ տա̈րի: Խաց որ չլնի մենքյ կմեռնենքյ անոթի:

Ծուտն կլնի էտա ճմեն սիլա̈խներ թա̈լի մեչ ճրին:

Կուգյա̈ն էրկու ախպերով կնստեն, էտա խացեր զմեն կուտեն, ա̈լա̈ ծուռ չկշտանա:

Ծուտ կասի խելա̈ցի ախպոր. - Էնա՛ սարի կողից մուխ կէլնի. էնտեղ խաց կթխեն. ես կլնեմ կէրթամ տա:

Ծուտն էլա̈վ քյելեց, խելացին ինգյա̈վ իտև: Կնա̈ցին խասան էտա մխու մոտ:

Ծուտ մտավ ներս: Պառավ նստեր ի աչ ծիծ թա̈լե վեր ծա̈խ թիվեն. ծա̈խ՝ թա̈լե վեր աչ թիվեն, խաց կթխի:

Ծուտ ախպեր նստավ խացի գյլեոխ. էն խաց կխանի, ծուտն կուտի:

Խելա̈ցի ախպեր կայնե տյուտ. չի գյմշնա մտնի ներս: Ծուտ կկանչի խելա̈ցուն, կասի. - Արե՛, արե՛, մի վախենա:

Խելացին էլ էկավ ներս: Նստան խաց կուտեն:

Պառավ ուր մազրուկեն իտիր գյետին: Էլավ խասավ տեխ մարթեր. ասաց. - Ես պիտի խացից պոծնի, նոր էրթի նեճիրի իտև, իմ նեճիրն էկավ իմ տյուռ:

Ծոտն ասաց պառվուն. - Ես քյո նեճիր չեմ՝ կուտես իմ ախպեր գյեռ ճան, կե. թե չէ՝ կլնեմ վեր, պալթեմ կզարկեմ քյո վիզ կթռուցեմ:

Պառավ կասի ծոուն. - Թո քյո ախպեր էրթա խե ոխչրին:

- Թո էրթա, - կասի. - եփ որ վնասվավ, մեյ պալթա կզանեմ քյե:

Ախպեր կնաց խե ոխչրին: Պառավ իսկի ճարմ չկրցավ կնդներ, ասաց.

- Բալքյի էսա ծոտն ուտեմ, խելացին իմ ճաշն ի:

Ամեն օր պառավ կնստի, խաց կթխի, ծոուն չկանա կշտացուցե:

Պառավ կասի. - Ծու՛ռ, էսօր տյու կնա խե ոխչրին, թող ախպերտ մնա տուն, մեյ կտոր ինոր խալավ լվամ:

Ծոտ կասի պառվուն. - Ես կէրթամ խե ոխչրին, չպռնես իմ ախպորն ուտես, պալթեմ կզանեմ, քյո վիզ կթռուցեմ:

Ծոտն էլավ վեր: Ուր գյմպանակն առեց: Քյանի խով էր՝ ոխչար քշեց, որ արև իտուր վերեն, էլ ոխչար չքշեց: Էտա ոխչրներ ամբողջ մորթեց: Էլավ վեց խատ, առեց թալեց քյամակ իպե թմլեց պառվու պակի մեջ, կանչեց ախպոր. - Քյելի էրթանքյ, ոխչրներ մորթեր եմ, կրենքյ պիրենքյ:

Կէլնեն կէրթան սար: Ախպեր մեյ խատ կառնի, ծոտ վեց խատ կառնի. ամբողջ ոխչրներ կկրեն կպիրեն: Պառավ խաց թխելուց կպոծնի:

Կէլնի կուգյա պակ, տիսնա ոխչրներաց ջենդկներ. կասի. - Ասպած քյու տուն ավիրի, տյու ի՞նչխ իմ ոխչրներ մորթեր ես:

Կասի. - Չին կանե քյելե, էսանկնա խանգյիստ ի, շոտ արա խաց պե, ես անոթի մեռա:

Խացն կուտեն, կէրթան ինոնց տեղ պառկեն:

Խելացին կասի ծոուն. - Իլի փախենքյ, էսա պառավ մե պիտի ուտի:

Ծոտն կասի. - Կուտի՝ քյե կուտի: Ջի պամ չկանա անե:

Խելացին շատ աղաչանքյ կանի ծոուն, կէլնեն էրկուսով կփախնեն: Քիչմ կցանձրանան. առում կա էնտեղ ճյուրի, կակուղ խողի վրա էտա ծուռն կնստի: Քիչմ չամուռ կանի, կասի ախպոր. - Ախպե՛ր, ես պուտուկ կշինեմ, որ պառավ կուգյա, կկովեքյ, չլնի տեք վեր իմ պուտկներաց, ծեր վիր ոտ տիպնի իմ պուտկին, մեկ պալթա կզարնեմ:

Պառավ ուր տնեն էլավ վեր, էլավ խասավ մոտ խելացին: Տիպան իրար՝ պառավն ինան խելացին:

Չուր կեսօրին կռվան, մե մեյ թող տվին: Կտոմ խանգստացան, էլմ էլան խասան իրար:

Խելացի ախպերն ոչնչացավ, պառվուն յա՛վաշ-յա՛վաշ ճխթեց տեխ ախպոր պուտկներ: Պառվու ոտաց մեջեն յավաշմ ուր ոտ պարզեց, զարկեց ծոտ ախպոր պուտուկն կոտրեց:

Ծոտ ախպեր ասաց. - Պառա՛վ, տյու ընչի՞ իմ պուտուկ քյակիր:

Էլավ ծեռն իտուր պալթեն, մեյ խատ իզարկ պառվու քյամկին, պառավն սպանեց:

Ծոտն ասաց. - Պիտի էրթամ պառվու տուն, կուշտ քյաբաբ անեմ ուտեմ:

Ծուռն էլավ կնաց պառվու տուն, խելացին ինգյավ իտև: Կերան, խման: Խելացին ասաց ծոուն. - Էլի էրթանքյ էսա տեղից:

Էլան էրկսով էկան: Էկան ուրենց տուն: Խելճցին ասաց ծոուն. - Տյու կաց տուն, ես կէրթամ փլան քյաղքյի մեչ կէլնեմ մշակ:

Ծուռ մնաց տուն: Խելճցի ախպեր կնճց մտավ քյաղաքյ, կայնավ բազար, կապոտ աչքյ մարթմ էկավ էտա խելացի ախպորն ասաց. - Մշկութեն չե՞ս անե:

- Կանեմ. - ասաց:

Առեց կնճց ուր տուն:

Ասաց. - Ի՞նչ կուզեմ քյո հաղն:

- Տարելիցքյ խազար կուռուշ:

- Լա՛վ. - կասի. - քյե խճզար կուռուշ. զեօլմ կաշի քյո քյամկից կառնեմ, թե որ տյու զի հաղթեցիր՝ տյու զեռլմ կաշի իմ քյամկից խան: Դե՛, կնա տավրի տակն ավելի, հարդ, խոտ տուր, արե տուն:

Մարթն գնաց տավրի տակ ավլեց. հարթ. խոտ իտուր, էկավ տյուռ նստավ:

Տան տերն ասաց. - Զի շում կա, որտեղ որ նստի՝ դա պիտի վճրես, երփոր իմ խոսքով չանես, զեռլմ կաշի քյամկեղ կքյաշեմ: Դե՛, էլի կնճ պառկի:

Տան տերն էլճվ կնաց ուրտեղ պառկավ:

Խելճցի ախպերն ինքն ուր ասաց. - Էսա իմ պճն չի, էսա իմ ծուռ ախպոր պճն ի:

Էլճվ կիշրով փախավ կնաց ուր տուն, ծուռ ախպեր քնուց խաճեց վեր, ասաց. - Ախպե՛ր, ես իմ հճղ բազար արեր եմ, տարին խճզճր կուռուշ, խիվանդ եմ, չեմ կանա անե. արի՛, կնճ իմ տեղ պճնի:

Էլճվ ծուռ ախպոր ծեռ պռնեց. կիշրով իպե խճեց փճգյախ, թողեց կնճց ուր տուն:

Ծուռ ախպերն ի, էլճվ կայնավ մեչ փայխին, կէրթճ կուգյճ. թե երփ պիտի լյուսնա. ես շատ անոթի եմ՝ կասի ինքնուր:

Լեոսցավ: Աղեն կանչեց. ասաց. - Էլի՛, կնճ վիցկի, էսա շուն էլ տար խե քյե: Իմ շուն որտեղ կնստի, էնտեղ պիտի վճրես:

Տղեն էլճվ եզներ իթող փճյխից. եզներ լծեց, քշեց կնաց մեկ կակուղ տեղմ, եզներ իթող. շուն կնճց էլավ սարի գլոխ:

Տղեն ասաց. - Ջա՛նմ, էսա իմ աղեն զի ասաց՝ շան նստած տեղ վարես: Ես ինչխ էլնեմ էրթճմ քյար վարեմ:

Էլճվ կնճց թեխ շուն: Շուն պռնեց, իզճր քյարին, խատուց. շան արուն քսեց ուր աչք իրես: Շան ոտ պռնեց քյաշեց իպե էտա կակուղ տեղ:

Էլճվ վիցկին լծեց, գյեռ կվարի:

Աղի կնիկն էլճվ, խացն առեց էկավ մոտ ծոռ: Էկավ տեսավ, որ շուն խատուկ ի:

Ծուռն ասաց. - Տեսնա՞ս իմ աչք, իրեսի արուն, գյելեր էկան, էսա շան պստոին, ես կնացի ընգյճ մեչ, քյիչ էր մնացե, որ զիկ էլ ճղճղին:

Աղեն կասի. - Նճ՛ պուտկի պերան պճնճ, նճ՛ խաց խոռի, անոթի նստի, կուշտ կայնի:

Ծուռն պուտոյ կնգյճ ծեռնեն առեց, պուտկի ռո ծակեց. կերն կերավ: Խացի կող պյուլոր խանեց, կես տեղ իթող, պուտուկ իտուր կնգյճ ծեռ: Կնիկ առեց պուտուկն, էկավ տուն:

Իրկան ասաց կնիկ. - Տիսնա՞ս էսա պուտուկ ոռքյ ծակեց, կերն կերավ, իտուր ծեռս: Ջարկե շան խատուցե, շան արուն քսե ուր աչք-իրես: Որ չե՞ս ավատա, իրիկուն կուգյճ, կտիսնաս:

Իրիկուն ծուռն էկավ տուն: Աղեն կնգյան ճամխեց, ասաց. - Կնա՛, մեր մշակուն ասա, եզներ էրդսից պիրի:

Կնիկ կնաց մշակուն ասաց, թե եզներ էրդսից պե:

- Ծատ լավ, - ասաց, - էրդսից կպիրեմ:

Եզներ քշեր, խանեց տանիս, եզներ մորթեց. տանիս քյակեց, մլշկեց տակ, թողեց էկավ տուն:

Կնաց մոտ աղեն ասաց. - Եզներ էրդսից պիրեցի:

- Դե՛, կնա փաւգախ, եզներաց ըսկում հարթ տուր, որ մենակ կուտշներն էրևան:

Էլավ կնաց փայխի էնմեկէլ եզներն էլ մորթեց, քյաշեց մսրի առաճ, գլխներ իտեր մսրի մեչ: Հարթ լցեց վրեն, մենակ կուտշներ էրևաց:

Էլավ կնաց մոտ աղեն, ասաց. - Աղա՛, արե տեսի խենքյ. կխավնե՞ս:

Աղեն էլավ էկավ փաւզյախ. տեսավ, որ տավրներ հմեն մորթեր ի. գլխներ տրե մսուր, մեյ կուտշներ կերևա:

Աղեն ասաց. - Ես քյե ասի՝ եզներ էրդսեն պե. ես քյե ասի՞ մորթի: Ես քյե ասի՝ ըսկում հարթ տուր, մենակ կուտշներն երևան:

Ծուռն ասաց աղին. - Չլնի՞ տյու փոշման ես էսա պանից, տես՝ «Ո՛վ փոշմնի, զեռւմ կաշի քյամկեն քյաշի»:

Աղեն էլավ կնաց տուն, ուր կնգյան ասաց. - Էլի կնա մշակին ասա՝ թո տավրի տակ ըսկուն մաքրի ավելի, որ ծեթ ժողվել գյա:

Կնիկն էլավ էկավ մշակուն ասաց:

Մշայն էլավ կնաց մաղազեն, կուժմ ծեթ գյեողցավ, իպե տավրի տակ ավիլեց. էտա կուժ ծեթ իլից էնտեղ:

Մշակն էլավ կնաց մոտ աղեն. - Արե՛, մեր տավրի տակ ըսկուն եմ ավելի, ծեթ ժողվել կուգյա:

Աղեն էլավ էկավ, տեսավ, որ ծեթ թափեր ի մեչ փայխին:

Աղեն ասաց մշակուն. - Ես քյե ասի ըսկուն սերսուփ ավելի, որ ծեթ ժողվել գյա:

- Է՛, աղա՛, քո խաբրով եմ արե, ծեթ կա գյետին: Չէլնի՞ փոշման ես, տես՝ «Ո՛վ փոշմնի, զեռւմ կաշի քյամկեն քյաշի»:

Աղեն ասաց. - Տանսկ պե սրի. որ տավրներ քյոթենքյ, կանենքյ կավուրմա:

Մշակն էլավ տանակն իպե, սրեց, եզներ քյոթեց. պրտեց. կեսն արին կավուրմա, կես տրին շոր, էլան մաղմ յիլին միս լցին:

Աղեն ասաց. - Էլի՛ առ, կնա մեր աղչկան:

Մշայն էլավ մաղ գյրկեց, ամեն քյեռշեն պատի ճեղքեր մեյ կտոր ճղթեց, էտա մսի կտոր իթող ինե, տարավ մաղն իտուր աղչկա առաճ:

Աղչիկն ասաց. - Տաս խատ տավար ի մորթե իմ խեր, էսա կտո՞րն ի ճամխե: Առ կնա, զի պետք չի:

Էլավ մաղն առեց, էկավ: Ծամբախ մեյմեկ պատի ճեղքերաց մսի կտորներ իխան տյուս, լցեց մաղ, մաղն յիլին արեց, առեց էկավ, իպե իտիր աղի դիմաց:

Աղեն ասաց. - Ընչի՞ չառեց:

Ասաց. - Քո աղչիկ կասի՝ քիչ ի:

- Է՛, քիչ ի, Է՛լ լից վրեն տար:

Էլավ էրկու ըսկուն էլ լցեց վրեն, առեց տարավ:

Էլմ ըսկուն արեց, էլմ էրկու կտոր իթող ինե, տարավ աղչկան, աղչիյն էլմ ետ տանցուց: Մշայն էլմ ժողվեց մսի կտորներ, առեց էկավ:

Աղեն ասաց. - Կնա̈՛, էնա ճեռչ կողով սլե, յիլին արա, առ տար:

Ճեռչ կողով յիլին արաց. առեց կնա̈ց: Էլմ ցրվելեն կնաց: Ծնգա̈ն կոտի չոր ոսկոռ իթող մեչ կողվին. տարավ. իտիր աղչկան տիմա̈ց:

Աղչիյն ասաց. - Ջա՛նմ. խերիքյ, հա ընչի՞ պիրես-կտանես. չե՛մ առնե:

Ծուռն ասաց աղչկան. - Խերիքյ չի՞ գի տանես պիրես:

Ծեռ իտուր ոսկոռն կողվից խանեց. մեյ խատ իտուր աղչկա ճայտի մեչ: Աղչիյն ինգյավ գյետին մեռավ:

Էլա̈վ ուր կողովն առեց. մսեր ժողվեց. էկավ իտիր աղի տեմ:

Ասաց. - Քյո ախչիկ զի շա չարչրեց: Ոսկոռմ էլ զարկիցի քյո աղչիյն սպանեցի:

Ասաց. - Մշա՛կ. մշա՛կ, մեր տղեն տյուս կէլնի, տար պտըքցու:

Տղին տարավ տյուս, ցիցմ իզւսր պատ, տղեն ճխթեց վեր էտա ցցին, զինք թողեց էկավ տուն:

Աղեն ասաց ծռուն. - Ու՞ր է տղեն:

- Տարա պտըքյցուցի:

Ասաց. - Ես քյե ասիցի տղին տար սպանի՞:

Ծուռն ասաց. - Տյու զի չասի՞ր տղին տար պտըքյցու: Ես էլ տարիր եմ. պտըքյցուցեր եմ: Զլնի՞ փոշման ես, տե՛. «Ով փոշմնի, զոլմ կաշի քյամկեն քյաշի»:

Աղեն ծռուն ասաց. - Դե՛. խաց կե. կնա̈ տեղեր պառկի:

Ծուռն էլավ տյուս:

Էլա̈վ կայնավ հառճև տռան:

Իրիկն ասաց կնգյա̈ն. - Էլի քիչմ փոխինդ պաղարճ շինի, թողնենքյ էսա ծռու ծեռնից փախենքյ. որ չփախենքյ. էսա մարթ զոլմ կաշի մեզնից պիտի քյա̈շի:

Կնիյն էլա̈վ. պա̈ղարճի խմոր կշաղաղի:

Ասաց. - Մա՛րթ. տյուն էլ էլի՜. թոներ վառի:

Ծուռ գյեռ կայնե հառճև տռան. ականջ կանի:

Աղեն կասի կնգյա̈ն. - Էսււ փոխինդ, պա̈ղարճ որտե՞ղ պիտի լցենքյ:

Ասաց. - Լի՛ց էնա ճեռչ կողով:

Ծուռ որ էտա լսավ. կնա̈ց մտավ մեչ կողվին: Փոխինդ պա̈ղարճ կնիյն իպե իլից վերեն:

Աղեն չվան իթա̈լ կողով. շլկեց: Կնիկ իտուր իտև. սա̈հա̈թվամ ճա̈մբախ կնա̈ցին, զյեղիմ ռասթ էկան: Գյեղի շներ թա̈փա̈ն վեր էտա խալյուն:

Ասաց. - Խոզե՛, մկա մեր մշակ ըստեղն էլներ, շներ քյշեր:

Համան ծուռն կողվի մեչեն ասաց. - Աղա՛, աղա՛, մա̈ռա̈խ մա՛նե. իս ըստեն եմ, զի տիր գյետին. էլնեմ շներ քյշեմ:

Կողվից էճա̈վ տակ, լա̈րեց շներ. մեյմեյ սարիմ գյլեոխ տարավ, տա̈ռցավ էկավ: Ասաց. - Աղա՛, տյու դեռ՞ր կէրթեքյ:

Ասին. - Կէրթա̈նքյ ուխտի:

- Կողվո՞վ կէրթա̈քյ ուխտի:

Գյետմ կա էտա գյեղի քյա̈նա̈ր: Կարմունջ կա վրեն, աղեն էլա̈վ վեր էն կարմնջին նստավ, կնիյն էլ կնա̈ց էն տեղն նստավ:

Ծուռն ասաց. - Աղա՛, ի՞նչ պիտի անես:

- Մենքյ պիտի էսա կարմնջի վերեն քյնենքյ:

Ծուռն ասաց. - Ընչի՞, էլ տեղ չկա էտա կարմնջի վերե՞ն պիտի պառկենքյ: Էսա անխավատ դաշտ մե ծեռ չիտա՞, որ էսա կարմնջի վերեն քյնենք:

- ՉԷ. - ասաց, - մենք պիտի էսա տեղ քնենք:

Մուտն ասաց. - Քնենք, քնենք:

Կերան, խման, տա քնան:

Կնիկ ինգյան օրթեն, ծուռ մեյ կող, իրիյն մեյ կող:

Աղեն ասաց կնգյան. - Զքնես, բալքի ծուռ քնի, ոտկեր պռնենք թալենք ճյուր տանի:

- Աղեյ կէլնի, չեմ քնի:

Զուր կես կիշեր աղեն ուր կնիկ չքնան, ամա ինորից ետ քուն տարավ, էլ չկարցան ճրթուն մնալ:

Մուտն էլավ կնգյա յազմեն առեց, թալեց ուր գյլեոխ. կնգյան յավաշմ քյաշեց էսա տեխ, մտավ մեչ էրկուս:

Աղին շլկեց, ասաց. - Էլի վեր, ծուռ քներ ի, ոտնից պռնենք թալենք ճյուր:

Մուռ կնգյան ոտներ պռնեց, գյլեոխն աղեն պռնեց. թալեցին մեչ ճրին:

Աղեն ասեց. - Վա՜յ, փյոթանք մեր ծոուց: Կնի՜յ, դե՛, էլի էրթանք:

Մուտն ասաց. - Էն՛ քյո կնիյն էր թալիցինք ճյուր: Տյու դեռ՞ր կփախես:

Իպե պառկցուց աղին, զեռլմ կաշի քյամկից քյաշեց, աղեն մեռավ:

Էլավ էլմ կնդավ աղին, կապեց վերեն, խիյարմ իստկեց կապեց աղի ծեռաց մեչ, չախուն էլ մեյ ծեռաց մեչ կապեց, կշեց մեչ էտա գյեղին: Իրիշկաց՝ էտա գյեղի կալատեղ շեղքյմ ցորեն ի խառնած, յավաշ-յավաշ ուր իշուն ճա՛ խշթեց. էտա էշն կնաց վեր ցորնին, գյեռ ցորեն կուտի:

Մուտն կնաց պաղկվավ տիզի տակ: Ցորնի տերն իրիշկաց՝ էշ գյեռ վեր ցորնին կուտի:

Համան քյառեշդ քյաշեց էկավ տեխ իշու վիրվի մարթ, ասաց. - Կոռատար ուտես, խիյար կիտես ուտես, էշ կշեյ չես կիտե՞:

Քյառեշդմ կքյաշի կզարկի մեռելին. կպիրի տակ իշուց:

Մուտն տեզի տկից կլնի տյուս, կբոռա. կճվա, կուտա մեչ ուր գյլխուն, կասի. - Ցամա՛ն, տյու ընչի՞ իմ խերն սպանիր:

Ցորնի տերն կասի. - Աստծու սիրուն, ծեն մի՛ տա, զի կտանեն կախեն, էսա ցորեն քյութուն կուտամ քյո խոր արունք:

- Կուտաս իմ խոր արունք, ինչո՞վ պիտի տանեմ:

- Քրաջին ես կպռնեմ:

Մարթն կէրթա քրաշիքյ կկանչի: Ցորենն ամբողջ վերյուցել կուտա:

Քյրաշիքյ իշին կպիրեն-կպիրեն խասուցեն ծոու տուն, կտառտկեն:

Մուռ կասի ախպոր կնգյան. - Էլի՛, թոնիր վառի, ոսպնե պաս իփի պղինձմ:

Կնիյ կէլնի թոնիր կվառի, ոսպնե պաս կիփի:

Մուտն կասի քյրաջիյտերաց. - Ես բախս կառնեմ, ծեզնից որն տյուս էլավ ուր տակ, ինոր տավրներն իշվանքյ չեմ իտա:

Իրիկուն կերակուրն կուտեն, կքնեն:

Կես կիշրին ծուռն կէլնի ճմենի խոնշճտեր կառցկի, ամեն մեկի դոնի մեչ մեյ շերեփ պաս կլցի:

Մեյն կակխի, մեկէլին ծեն կուտա, կասի. - Տա՛ տղա, ես քյաքյեր եմ իմ տակ:

Մեյմկու ծեն կուտան, տեսնան, որ ճմեն էլ ապականեր են վեր ուրենց: Կեյնեն կիշրաց թոնեն փախնեն:

Իշվանքյն էլ չլերաց խետ կմնան ծոուն: